

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆ

ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍՐԱՀ

1975 թուականին ետք, բազմահազար հայ ընտանիքներ հեռացան Լիբանան, իսկ մնացողներուն կարելուք մէկ տոկոսը ընտրեցին նոր բնակավայրեր, հայկական թաղամասերէն դուրս: Լիբանանահայ գաղութը կորսնցուց իր աշխարհագրական միասնականութիւնը: Տնտեսական եւ ընկերային նոր համակարգը, ազգային առումով, ունեցաւ իր ժխտական ազդեցութիւնը մեր ազգային կառոյցներուն ինչպէս նաեւ՝ ինքնութեան վրայ: Վերջին տասնամեակին, աւելի մեծ թափով, կարգ մը տնտեսապէս բարեկեցիկ ընտանիքներ նախընտրեցին իրենց զաւակները ուղարկել օտար դպրոցներ, հետեւեալ ձեւով առարկելով.

1. Հայկական վարժարաններու կրթական մակարդակը ցած է:

2. Հայկական վարժարաններու մէջ տիրող ընկերային մթնոլորտը կարելիութիւն չ'ընծայեր իրենց զաւակներուն որ ապագայի նախարարի մը կամ ազդեցիկ անձնաւորութեան մը բարեկամութիւնը մշակեն մանկապարտէզի սեղաններէն սկսեալ:

3. Հայերէն լեզուն ոչ մէկ օգտակարութիւն ունի գործնական կեանքին մէջ ու որպէս ինքնարդարացում կրկնել թէ Հայ ըլլալու համար պայման չէ Հայերէն լեզուին տիրապետել:

Որպէս գործնական արդիւնք նոր իրավիճակին, ներկայիս, Հայկական վարժարաններ յաճախող աշակերտներուն նօսրացած թիւը մօտաւորապէս տասը հազար հինգ հարիւր է, իսկ օտար վարժարաններ յաճախողներուն աճող թիւը կ'ենթադրուի ըլլալ երեք հազարէն աւելի:

Եթէ քննարկենք այս շարժումին ծնունդ տուող պատճառները կը տեսնենք թէ հայեցի դաստիարակութեան դիմագրաւած առօրեայ դժուարութիւնները սատոյցին տեսանելի մասն է միայն ու արդիւնքը՝ աւելի հիմնական տազնապի մը՝ ինքնութեան տազնապին որ իր կարգին կը բխի ազգային նպատակներու անորոշութենէն: «Ի՞նչու Հայ մնալ Միխուքի մէջ» հարցադրումը, տրամաբանօրէն ոչ-համոզիչ պատասխաններու հետեւանքով կը վերածուի անտարբերութեան համաճառակին, սկիզբը որպէս լուռ ցաւ ծնողներու կողմէ եւ ապա՝ վարանոտ յուսալքում աշակերտներու:

Բաւարար չէ թուղթի վրայ սահմանել կրթական նպատակներ հետեւեալ զաղափարներէն ներշնչուած.

Ա. Պատրաստել հայութեան յանձնարարական հաւատացող եւ հայ լեզուն, ինքնութիւնը եւ մշակութային ժառանգութիւնը պահպանող ու տարածող անձեր:

Բ. Դաստիարակութեան հիմնակէտը նկատել հոգիի, միտքի եւ մարմնի հաւասարակշռուած զարգացումը: Գիտելիքներու եւ ծանօթութեանց պաշարին առ ընթեր, կազմաւորել բարիքն ու գեղեցիկին սէրը, ստեղծագործ աշխատանքի, համագործակցութեան եւ պատասխանատուութեան զգացումը, դժուար կացութիւններ դիմագրաւելու ու ընկերային յարաբերութեանց շնորհը:

Գ. Պատրաստել բարոյական հիմնական սկզբունքներուն եւ մարդկային իրաւունքներուն հաւատացող, զանոնք գործնականօրէն իրագործող ու պաշտպանող հաւաքականութեան մը անհատները:

Դ. Տնօրէններու, դաստիարակներու եւ այլ մասնագետներու օժանդակութեամբ մշակել գործնական կեանքի յեղաշրջող պայմաններուն յարմարող կրթական ծրագիրներ, եւ արդիւնաւէտ վարչական միջոցներով հսկել անոնց գործադրութեան:

Կարելի է բարելաւել մեր վարժարաններուն կրթական մակարդակը, ձգտելով գերազանցին: Պետական քննութիւններուն մէջ արդէն իսկ կ'արձանագրուին յաջողութիւններ որոնք դրականօրէն կրնան բաղդատուիլ Լիբանանի անուանի ոչ-հայկական դպրոցներու արդիւնքներուն հետ: Համալսարաններու մուտքի քննութիւններուն, հարիւրաւոր այլ ուսանողներու կողքին, հայկական վարժարաններէն շրջանաւարտ եղած աշակերտներ, յարաբերաբար սակաւաթիւ, ուշագրաւ մակարդակով կ'ընդունուին բոլոր համալսարաններէն ներս:

Բազմաթիւ հանրային գործիչներ, շրջանաւարտ հայկական վարժարաններէն, այժմ կը գտնուին պետական, հասարակական կամ ազատ ասպարէզի նախանձելի եւ յարգելի դիրքերու վրայ ու թերեւս կարգ մը օտար վարժարաններէ շրջանաւարտ անձեր պիտի փափաքէին որ անոնց հետ հայկական վարժարանի մանկապարտէզի նոյն դասարանին մէջ եղած ըլլային:

Իսկ ինչ կը վերաբերի Հայերէն լեզուի ուսուցումին, «ամէն մէկ լեզու մէկ մարդ կը նշանակէ» ասացուածքէն աւելի Հայերէն լեզուն գործնական բանալին է մաս կազմելու վեց միլիոն թիւ հաշուող հաւաքանութեան մը, նոյնիսկ շուկայական նկատառումներով:

Կարելի է քննադատել հայկական վարժարանները ու միաժամանակ արդարացնել անոնց ներկայ կացութիւնը տնտեսական եւ կազակերպչական պատճառաբանութիւններով:

Սակայն կը մնայ էականը:

Մփիոքահայր իր առօրեայ մտահոգութիւններէն անդին, յստակ պատկերացում մը չունի իր հաւաքական ապագային մասին: Մարդկային պահանջքներէն մէկն է ունենալ մեկին բայց ոչ սառած նպատակներ եւ հաւատալ յուսալից ապագայի մը: Հաւաքական ինքնութիւնը կը կազմաւորուի հասարակաց արժեհամակարգի մը առ անցքին շուրջ որ ուղղութիւն կու տայ մարդկային կեանքի վախճանականութեան ԳֆինալիդէՕ եւ կը լուսաւորէ անոր իմաստը: Արժեհամակարգը կարելի է մշակել, վերածելու համար զայն ազգային գաղափարախօսութեան որուն ամփոփումը եղող հաւատամքը պէտք է ըլլայ միաժամանակ մեր ազգային հիմնական նպատակներուն ներշնչման աղբիւրը եւ մեր հաւաքական արարքներուն վերջին դատաւորը:

«Ո՞ր կ'երթանք» հարցումը նախ պէտք է բաւարարուի վստահութեան զգացումով դէպի մեր ազգային առաջնորդները ու անոնց որդեգրած ուղին եւ ապա այն համոզումով որ անոնք ունին կարողութիւնն ու միջոցները իրագործելու մեր էական նպատակները:

Որպէս հանրային գործիչներ, մտազբաղ առօրեայ հրատապ գործնական հարցերով, հազուադէպ առիթներով կանգ կ'առնենք քննարկելու համար մեր գործունէութեան հիմնական նպատակները եւ անոնց իրագործումի միջոցներուն յարմարաւետութիւնը: Երբեմն, միջոցները կը վերածուին նպատակներու ստեղծելով կազմալուծումի առաջնորդող անտարբերութիւն: Իմաստի փնտռտուքը մարդկային հիմնական պահանջներէն մէկն է: Իմաստը կարելի է գտնել կոյր հաւատքով կամ չոր տրամաբանութեամբ եւ նաեւ երկուքին միաձուլումով: Որպէս ապրող բայց սահմանափակ կարողութիւններով օժտուած էակներ, եթէ մեր հարցադրումները տրամաբանական պատասխաններ չգտնեն կը գոհանանք հաւատքի նուազագոյն ապահովութեամբ որ կը մնայ նախապայման սակայն՝ ոչ բաւարար խթան պատճառ արկութեան:

Ազգային կեանքի բեմերէն կը լսենք կրկնուող նախադասութիւններ որոնք կ'ընկալուին որպէս անվիճելի ճշմարտութիւններ: Պահպանենք մեր ինքնութիւնը, պահպանենք մեր արժեքները: Մակայն Ի՞նչպէս կարելի է սահմանել մեր ազգային ինքնութիւնը: Որո՞նք են մեր ազգային արժեքները: Արդէօք գոյութիւն ունի Հայկական Բարատիկն մը, արժեհամակարգ մը: Պատմական, մշակութային եւ բարոյական ազգային արժեքները, որքա՞նով մնայուն են եւ վերջնական, մանաւանդ՝ Մփիոքի այլազան քաղաքակրթութիւններու ճնշիչ ազդեցութիւնը նկատի առնելով: Ուրեմն էական է որ հաւաքական ինքնաճանաչումը մը ետք բացայայտենք մեր նպատակները, իրապաշտ եւ գործնապաշտ մօտեցումով արժեքաւորենք մեր հաւաքական կարելիութիւնները, եւ վերաքննենք մեր աշխատամիջոցներու յարմարաւետութիւնը: Իմաստի փնտռտուքը որպէս Հայ գոյատեւելու, աւելի իրապաշտ կ'ըլլայ եթէ զուգահեռ ընթանայ մարդկային հիմնական պէտքերուն ու տենջերուն բաւարարումին:

Հաւաքականութեան մը ինքնութիւնը կը կազմաւորուի անցեալի ժառանգով ու ներկայի ընկերային, տնտեսական, մշակութային բարդ փոխ-յարաբերութիւններով: Գարերու պատմութեան կտակը, ընդհանրապէս գերծ ըլլալով կիռքերու գրոհներէն, կը վերածուի ազգային խորհրդանշաններու ու շաղկապող մասունքի: Ինքնութիւնը քարացած կարգավիճակ մէ չէ ու կը յեղաշրջուի նոր թափանցումներու մասնակի գտումով: Ինքնութիւն մը կը գոյատեւէ եթէ անխուսափելի փոփոխութիւններուն կարենայ ապահովել շարունակականութեան հաստատ հիմ մը, անցեալի փորձառութիւններու օգտագործումով, ինքնավստահ հանդուրժողութեամբ, յուսափութիւններու կարաւարումով, համերաշխութեան ու պատասխանատուութեան զգացումով, եւ ներքին փոփոխութիւններ կոելու կարողութեամբ:

Սփիռքի ներկայ իրավիճակը վտանգուած է գոյութեանական յարափոփոխ ցնցումներէն, ընկերային վերիվայրումներէն, մշակութային աղաւաղումներէն եւ նպատակներու անորոշութենէն, եւ կը մնայ անկայուն հաւասարակշռութեան մէջ:

Վտանգին կարելի է դիմագրաւել եթէ հետեւողական աշխատանքով փորձենք ղեկավարել մեր հաւաքական ճակատագիրը, ներմուծելով նոր խթաններ եւ պատճառարկումներ որպէսզի Հայ ըլլալը ունենայ իր գոյութեանական առաւելութիւնները: Հայ ըլլալու հպարտութիւնը հաստատուի զգացականէն անդին գործնական կեանքի առ նելու եւ տալու զաղափառին վրայ: Այսօրուան առնողները, բառին ամենալայն իմաստով, վերածուին վաղուան կամաւոր ու հաւատաւոր տուողներուն, որպէս անվերջ շղթայ ազգային իրարօգնութեան եւ համագործակցութեան: Հայ ըլլալը, Հայերէն լեզուն գիտնալը կրնան ըլլալ անհրաժեշտութիւն, այն պարագային, երբ մեր ազգային կրաւորական պատկանելիութիւնը կը վերածուի ներգործական եւ նպատակաւայ աշխատանքի իր անմիջական եւ համոզիչ արդիւնքներով:

Ճարտարապետ` Մկրտիչ Լ. Պուլտութեան 04.10.98

[HOME](#)